ԱԴՐԲԵՋԱՆԸ ԵՎ ՆԵՈԳԱՂՈՒԹԱՏԻՐՈՒԹՅՈՒՆԸ

Մարջանյան Ա. Հ.

Սեղմագիր

Գլոբալ «Հարավ» և «Հյուսիս» տարածաշրջանների դիմակայության համատեքստում, վերլուծվում է Ադրբեջանի կողմից «նեոգաղութատիրության դեմ պայքարի» խոսույթի օգտագործումը «Չմիացած երկրների շարժման» շրջանակներում:

АЗЕРБАЙДЖАН И НЕОКОЛОНИАЛИЗМ

Марджанян А. А.

Аннотация

В контексте противостояния глобальных регионов «Юг» и «Север», анализируется использование Азербайджаном нарратива «борьба с неоколониализмом» в рамках «Движения неприсоединения».

AZERBAIJAN AND NEOCOLONIALISM

Marjanyan A. H.

Summary

In the context of the confrontation between the global «South» and «North», the use of "fight against neo-colonialism" narrative by Azerbaijan within the framework of the Non-Aligned Movement is analyzed.

Արա Հ. Մարջանյան[1]

ԱԴՐԲԵՋԱՆԸ ԵՎ ՆԵՈԳԱՂՈՒԹԱՏԻՐՈՒԹՅՈՒՆԸ[2]

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Գլոբալ «Հարավ» և «Հյուսիս» տարածաշրջանների դիմակայության համատեքստում [1] «Արցախյան» հակամարտությանը բնորոշ է անհավասարակշռության իրավիճակ, գոյացած տարբեր ասպարեզներում կողմերի անհավասար կարողությունների և հմտությունների հետևանքով: Անհավասարակշռության այս իրավիճակը շարունակում է գոյություն ունենալ նաև հակամարտության «պատերազմական» փուլի ավարտից հետո՝ մարտահրավերներ նետելով Հայաստանին:

Դրանցից առաջինը առնչվում է ռազմատեխնոլոգիական ոլորտին, մասնավորապես՝ արդյունավետ «կրակային հզորությանը» *(firepower)*, իրազեկության *(ISR)*[3] մակարդակին, և արդի *C3* համակարգին[4]: Այս հարցին կանդրադառնանք առանձին հոդվածով: Մյուսը առնչվում է հակամարտության «արտաքին չափողականությանը»:

1. Խնդիրը

Նկատի ունենք մի կողմից՝ Ադրբեջանի և յուր անվտանգային ու ռազմական դաշնակիցների (Իսրայել, Թուրքիա, Պակիստան, Բելառուս, ՌԴ, Ուկրաինա և այլն), մյուս կողմից՝ Հայաստանի և իր սակավաթիվ ու ոչ այնքան արդյունավետ դաշնակիցների ցավագին իրադրությունը: Դրա գոյացման պատճառները մի քանիսն են [2], բայց այստեղ մեզ հետաքրքրում են նրանք, որոնք անմիջականորեն կապված են «Հարավ/Հյուսիս» գլոբալ դիմակայության հետ [1]:

Խոսքը մի կողմից՝ «Չմիացած երկրների շարժման» (ՉԵՇ)[5] հետ Ադրբեջանի համագործակցության բնույթի և խորության մասին է, մյուս կողմից՝ Ֆրանկոֆոնիայի միջազգային կազմակերպության (ՖՄԿ)[6] հետ Հայաստանի համագործակցությանը: Արդյո՞ք այն հավասարակշռում է Ադրբեջան–ՉԵՇ համագործակցությանը:

---

[1] ՄԱԿ ՀԾ ազգային փորձագետ (էներգետիկա), ԵՄ ազգային փորձագետ (տրանսպորտ), ԵԱՏՄ Փորձագիտական ակումբի անդամ, առաջատար վերլուծաբան, տեխ.գ.դ., ա.գ.ա.:

[2] Հոդվածը խմբագրություն է հանձնվել 10.07.2024 թ.:

[3] Հետախուզություն, դիտարկում, տեղազննում (intelligence, surveillance, and reconnaissance, ISR).

[4] Հրամանատարություն, ղեկավարում, կապ (command, control, and communication, C3).

[5] Non-Aligned Movement. Ունի 120 անդամ-պետություն, այդ թվում՝ 1 եվրոպական (Բելառուս, այն միաժամանակ նաև ՀԱՊԿ անդամ է), 37՝ ասիական, 53՝ աֆրիկյան, 26՝ ամերիկյան և 3՝ օվկիանիայի երկիր:

[6] L'Organisation internationale de la Francophonie (OIF). 2020 թ. դրությամբ միավորում է 54 լիիրավ, 7 ասոցիացված անդամ-պետություններ, ինչպես նաև 27 դիտորդ անդամներ: 2003-ից՝ Հայաստանը OIF-ի դիտորդ է, 2008-ից՝ ասոցիացված անդամ: 2012 թ. հոկտեմբերին Հայաստանը դարձավ OIF 54-րդ լիիրավ անդամ պետություն:

2. «Ֆրանկոֆոն երկրների կազմակերպությունը»՝ ընդդեմ «Չմիացած երկրների շարժման»

Չխորանալով խնդրի մանրամասների մեջ նշենք, որ մինչ 2012 թ. թե՛ Հայաստանը, թե՛ Ադրբեջանը ՉԵՇ դիտորդ անդամ երկրներ էին: Սկսած 2012 թ. հոկտեմբերից Հայաստանի ՖՄԿ հետ համագործակցությունը այն ժամանակվա իշխանությունները սկսեցին դիտարկել որպես Ադրբեջան–ՉԵՇ համագործակցության յուրօրինակ հակակշիռ, մասնավորապես 2015-ին՝ Հայոց ցեղասպանության 100-ամյակին սպասվող «ցունամիի» ենթադրյալ «ալիքին» ընդառաջ:

Մինչդեռ, Ադրբեջանի համագործակցությունը ՉԵՇ հետ աճում էր, առանձնանալով հիմնական նպատակին (հաղթանակ ԼՂԻՄ/ԼՂՀ-ում, դրա հայաթափում) հասնելու գործում հետևողականությամբ, և ՉԵՇ իսլամական երկրների ու Իսրայելի միջև ճկուն հավասարակշռության պահպանմամբ: Այս ամենն *ընթանում էր ՉԵՇ անդամ երկրների հետ տնտեսական և քաղաքական հարաբերությունների խորացմամբ, հիմնված թափ հավաքող նեոգաղութափիրության խոսույթի օգտագործման վրա, և զուգորդված «նավթային բիզնեսի» գարրերով:*

Իսկ Հայաստան–ՖՄԿ համագործակցության արդյունավետությունը իր գործնական, առաջին հերթին՝ ենթակառուցվածքային ու աշխարհաքաղաքական առումներով սկսեց հիշեցնել Հայաստան–ՍԾՏՀ[7] և Հայաստան–TRACECA[8] «համագործակցությունը», որոնց անարդյունավետության ու անպտղության պատճառով «*համագործակցություն*» բառը ստիպված ենք վերցնել չակերտների մեջ: Արդյունքում, 2015 թ. վերջից սկսեց աճել «Ադրբեջան–ՉԵՇ» և «Հայաստան–ՖՄԿ» միջև անհավասարակշռությունը: Իրադրությունն այստեղ սկսվեց փոխվել միայն վերջերս, Արցախի «լուծարումից» և լիակատար հայաթափումից հետո միայն, Հայաստան–Ֆրանսիա ռազմատեխնիկական որոշակի համագործակցության մեկնարկով:

Իրադրությունը դարձավ հատկապես ընդգծված սկսած 2019-ից, երբ ԱդրՀ-ն միաձայն ընտրվեց ՉԵՇ նախագահող երկիր՝ 2019–2024 թթ. համար: Ընդգծենք, որ *ադրբեջանական վարչակազմի համար այս հանգամանքը դարձավ վճռական գործոն և ուրվագծեց* 2019–2024 թթ. *որպես «Արցախյան հարցի վերջնական լուծման» ամենանպաստավոր ժամանակահատված:*

2019 թ. հոկտեմբերի 25-26-ին Բաքվում կայացավ ՉԵՇ անդամ երկրների ղեկավարների 18-րդ Կոնֆերանսը՝ «Բանդունգյան սկզբունքների պահպանմանը, արդի աշխարհի մարտահրավերներին (ի՛մա՝ «նեոգաղութատիրությանը» – **Ա.Մ**.) համաձայնեցված և համակարգված պատասխան տալու նպատակով» խորագրով: Ավելին, 2023 թ. հուլիսին Բաքվում հիմնվեց «Գաղութատիրության և նեոգաղութատիրության դեմ պայքարի

[7] Սևծովյան տնտեսական համագործակցության կազմակերպություն (BSEC): Չնայած նրան, որ Հայաստանը ՍԾՏՀ անդամ էր դեռ 1999-ից, համագործակցությունը այստեղ կարելի է համարել ամբողջովին ձախողված [3]:

[8] «Transport Corridor Europe Caucasus Asia». Հայաստանը դրան անդամակցում է 1993-ից, սակայն կիրառական նշանակության արդյունքները կարելի է, և պետք է, համարել զրոյական:

օժանդակման նախաձեռնող խումբը»[9], որն առավել հայտնի է իր ռուսերեն հապավմամբ՝ БИГ (Бакинская инициативная группа) [4].

БИГ նպատակը հստակորեն նշել էր հենց նախագահ Ի. Ալիևը՝ 2023 թ. հոկտեմբերի 20-ին Բաքվում մեկնարկած «Նեոգաղութատիրություն. Մարդու իրավունքների խախտում և անարդարություն» խոսուն խորագրով միջազգային համաժողովի մասնակիցներին ուղղված իր ողջույնի խոսքում. «*Ադրբեջանը չափազանց մտահոգված է 21-րդ դարում գաղութատիրության շարունակմամբ և դրա նոր դրսևորումների աճող միտումներով: Թեև Բանդունգի կոնֆերանսից անցել է մոտ 70 տարի, կան երկրներ, որոնք դեռ շարունակում են գաղութատիրությունը: Այդ երկրներից մեկը Ֆրանսիան է: Ընդհանրապես մարդկության գաղութատիրական պատմության արյունալի հանցագործությունների մեծ մասը կատարել է Ֆրանսիան*»:

Կոնֆերանսին մասնակցում էին ներկայացուցիչներ Ալժիրից, Քենիայից, Մալիից, Մարոկկոյից, Եթովպիայից, ինչպես նաև Գվադելուպայից, Մարտինիկայից, Նոր Կալեդոնիայից, Ֆրանսիական Գվիանայից և Պոլինեզիայից: «*Այսինքն այն երկրներից, որոնք ժամանակին առավելագույնս տուժել են ֆրանսիական գաղութատիրությունից, իսկ այսօր տառապում են ֆրանսիական նեոգաղութատիրությունից: Ըստ էության, դրանք բոլորն էլ Ֆրանսիայի գաղութներ են, ֆորմալ առումով՝ ֆրանսիական անդրծովյան տարածքներ*» պարզաբանվում է [4]-ում: Կոնֆերանսի նյութերին կցված էր «*Ֆրանսիական գաղութային կայսրության փլուզումը*» վերնագրով քարտեզը, որը և վերարտադրում ենք այստեղ (**Քարտեզ** 1):



Քարտեզ 1. «Ֆրանսիայի գաղութային կայսրության քայքայումը». **Աղբյուր՝** [4]:

[9] «Инициативная группа для поддержки борьбы с колониализмом и неоколониализмом».

2024 թ. ապրիլի 17-ին Ֆրանսիան ետ կանչեց իր դեսպանին Բաքվից, իսկ հաջորդ օրը՝ 2024 թ. ապրիլի 18-ին, Ադրբեջանի Միլի Մեջլիսում տեղի ունեցավ «*Նոր Կալեդոնիա. Պատմություն, արդի մարտահրավերներ և սպասվող ապագա*» խորագրով գիտաժողովը [5]: Դրա ընթացքում Նոր Կալեդոնիայի Կոնգրեսի ենթակառուցվածքների հանձնաժողովի նախագահ Ն. Օմայրան համագործակցության մասին հուշագիր ստորագրեց Ադրբեջանի հետ: Նրա խոսքերով «*հուշագիրը ներառում է քաղաքական աջակցություն: Միևնույն ժամանակ, մենք կկարողանանք զարգացնել մեր համագործակցությունը այնպիսի ոլորտներում, ինչպիսիք են՝ տնտեսությունը, մշակույթը և բնապահպանությունը: Մեզ համար նոր էջ է բացվում, այսօր մենք երկու ժողովուրդների միջև նոր պատմության հիմքն ենք դնում*» [5]:

2024 թ. մայիսի 16-ին, Նոր Կալեդոնիայում սկսվեցին անկարգություններ, որոնք հանգեցրին բախումների և զոհերի: Ֆրանսիան ստիպված եղավ 600 ժանդարմ ուղարկել Նոր Կալեդոնիա՝ տրանսպորտային ենթակառուցվածքները վերահսկելու և արտակարգ դրության պայմաններում կարգուկանոն պահպանելու համար: Մայիսի 23-ին Ֆրանսիայի նախագահ Է. Մակրոնը ստիպված էր ժամանել Նոր Կալեդոնիա, իրադրությունը կարգավորելու նպատակով[10]:

Անկարգությունների ընթացքում սադրիչների ձեռքում նկատվեցին ադրբեջանական դրոշներ: Ըստ Ֆրանսիայի ՆԳՆ ղեկավար Ժ. Դարմանինի *Politico* ամսագրին տրված հարցազրույցի՝ «*Ադրբեջանական հետքը այս անկարգությունների կազմակերպման մեջ հորինվածք չէ ամենևին: Ես ափսոսում եմ, որ որոշ անջատողականներ գործարքի են գնացել Ադրբեջանի հետ*» [11]:

Ըստ նույն աղբյուրի, «*Ֆրանսիայի հետախուզության ներկայացուցչի խոսքով՝ Մոսկվան և Բաքուն խաղաղօվկիանոսյան արշիպելագի բնակիչների շրջանում հետևողականորեն առաջ են քաշում՝ «Ֆրանսիան գաղութատիրական պետություն է» խոսույթը*»:

Իր հերթին, Ադրբեջանի ԱԳՆ պաշտոնական ներկայացուցիչ Ա. Հաջիզադեն հակադարձել էր, որ «*Ֆրանսիայի ՆԳ նախարարը պետք է կենտրոնանա անդրծովյան տարածքների նկատմամբ իր երկրի ձախողված քաղաքականության վրա, ինչը հանգեցրեց նման բողոքի*»: Իսկ Ադրբեջանի ԱԳՆ պաշտոնական բողոքի նոտայի մեջ նշվում էր, որ. «*Ի տարբերություն Ֆրանսիայի, որտեղ համատարած արձանագրված են մարդու իրավունքների կոպիտ խախտումների փաստեր, անկարգությունների ժամանակ ցուցարարների սպանություններ, իսլամաֆոբիայի դրսևորումներ և մահմեդականների վրա հարձակումներ, ինչպես նաև հակասեմիտիզմ, Ադրբեջանում լիովին ապահովված են [մարդու] հիմնարար իրավունքներն ու*

[10] Макрон прибыл в Новую Каледонию на фоне беспорядков. РБК, (23.05.2024), https://www.rbc.ru/rbcfreenews/664e8ec19a7947c1062041d7 (բեռնման օրը՝ 16.06.2024).

[11] https://www.politico.eu/article/france-accuse-azerbaijan-fomenting-deadly-riot-overseas-territory-new-caledonia/ (բեռնման օրը՝ 16.06.2024).

ազատությունները»[12]: Իսկ, 2024 թ. մայիսի 16-ին ԲԻԳ գործադիր տնօրեն Ա. Աբբասովը հայտարարել էր, որ. *«Այսօր մենք տեսնում ենք, թե ինչպես է Ֆրանսիայի կառավարությունը ձգտում պահպանել իր նեոգաղութային քաղաքականությունը»*:

Մի կողմ դնելով ադրբեջանական այս զավեշտալի հակադարձումներից առաջացած զգացմունքները, անհրաժեշտ ենք համարում փաստել, որ.

- *Սկսած 2019-ից, երբ Ադրբեջանը դարձավ ՉԵՇ նախագահող երկիր, և մինչև 2023 թ. ԼՂՀ «լուծարումը» ու հայ բնակչության տարհանումն ընկած ժամանակահատվածում, Ադրբեջանի արտաքին քաղաքականությունը և դրա գործունեությունը ձեռք են բերել գլոբալ բնույթ, ներառելով «նեոգաղութատիրության դեմ պայքարի» խոսույթը:*
- *Ադրբեջանը ակնհայտորեն դիրքավորվում է գլոբալ «Հարավի» և «Հյուսիսի» աշխարհաքաղաքական դիմակայությունում, ընտրելով գլոբալ «Հարավի» կողմը, կամա թե ակամա սատարելով ՌԴ ջանքերը՝ գլխավորելու «Հարավի» արշավը ընդդեմ «Հյուսիսի»*:
- *Այն հանգամանքը, որ այս ժամանակահատվածը ամբողջությամբ ընդգրկում է 44-օրյա պատերազմը, Շուշիի անկումը և 2020 թ. նոյեմբերի 9-ի Եռակողմ հայտարարությունը, պետք է հուշի ՀՀ արտաքին քաղաքականությանը անհրաժեշտաբար դիտարկել Արցախյան հիմնախնդիրը գլոբալ «Հարավ» և «Հյուսիս» դիմակայության տրամաբանության մեջ:*

3. Մի փոքր տեսական «դադար»

Վերջին տարիների Ադրբեջանի ելքը գլոբալ աշխարհաքաղաքական թատերաբեմ մեզ համար շատ նշանակալի զարգացում է, նոր, հավանաբար՝ ռազմավարական նշանակության մարտահրավեր, կարևոր թե՛ տեսական, թե՛ կիրառական տեսանկյուններից: Սկսենք տեսական որոշ դիտարկումներից:

Բնական կլիներ ենթադրել, որ Փարիզի և Բաքվի հարաբերությունները վատթարացել են՝ պայմանավորված ԼՂՀ հարցում Ֆրանսիայի դիրքորոշմամբ, Հայաստանի ու Ֆրանսիայի միջև վերջերս ուրվագծվող ռազմատեխնիկական ու ռազմաքաղաքական համագործակցության մեկնարկով: Ըստ էության, հենց այսպես էլ մեկնաբանվում է ստեղծված իրադրությունը մի շարք հայերեն և ռուսալեզու վերլուծականներում:

Սակայն, կարծում ենք, այդպիսի մեկնաբանությունը, առերևույթ՝ ճշմարիտ, դիտարկումներից դուրս է թողնում ֆրանսիական արտաքին քաղաքականության խորքային դրույթները և ինքնուրույն աշխարհաքաղաքականություն վարելու Ֆրանսիայի կարողությունը[13]: Այս առումով անթույլատրելի պարզեցում, ավելի վատ՝ պարզապես սխալ է ընկալել ՌԴ և Ադրբեջանի ներկայիս հակաֆրանսիական քայլերը պայմանավորված բացառապես

[12] https://azertag.az/ru/xeber/mid_francuzskaya_storona_dolzhna_izvinitsya_za_svoe_poslednee_zayavlenie_v_otnoshenii_azerbaidzhana-3007354 (բեռնման օրը՝ 01.07.2024):

[13] Հովյան Վ. Ռ., Հայ-ֆրանսիական հարաբերություններն արդի փուլում, ԱՌՎԱԿ, (29.01.2024), https://arvak.am/հայ-ֆրանսիական-հարաբերություններն/ (բեռնման օրը՝ 06.07.2024):

Ուկրաինայում ՌԴ կողմից վարվող Հատուկ ռազմական գործողությամբ (ՀՌԳ), կամ բացատրել «ՀՀ–Ֆրանսիա» ռազմատեխնիկական որոշակի համագործակցությամբ:

Մեր կարծիքով Ֆրանսիայի (և Չինաստանի) ներկայիս հատուկ վերաբերմունքն ու դիրքորոշումը թե՛ ՀՌԳ, թե՛ ԼՂՀ, և թե՛ ՄԱ կոնֆլիկտների նկատմամբ, հատկապես՝ ԱՄՆ-ի «ռազմավարական ուշաթափության» ներկայիս պայմաններում, կապված 2024 թ. նոյեմբերյան նախագահական ընտրությունների (ներքին կայունության կորստի վտանգ) և Մերձավոր Արևելքում շիկացող իրավիճակի («Իսրայել–Լիբանան–Հեզբոլլահ» նոր հակամարտության հնարավորություն)[14] հետ, գնում են մինչև անցած դարի վաղ 90-ականներ: Երբ ակտուալ էին փլուզվող ԽՍՀՄ նախկին հանրապետություններում խորհրդային ատոմային զենքի «ժառանգության» հարցերը, ձևավորվում էր Բուդապեշտյան հուշագրերի մեխանիզմը, և նախկին խորհրդային հանրապետությունների ինքնիշխանության ու սահմանների ճանաչման հարցերը: Դրանց բոլորում Ֆրանսիան ուներ իր հատուկ դիրքորոշումները և իրացրեց դրանք տարբեր փաստաթղթերի և պայմանավորվածությունների միջոցով[15]: Ֆրանսիայի հատուկ կեցվածքը գնում է նույնիսկ էլ ավելի հեռուն՝ ընդհուպ մինչև 1966-ին ՆԱՏՕ-ի «Միջուկային պլանավորման» համակարգից Ֆրանսիայի դուրս գալուն, ու դրան ետ վերադարձը՝ արդեն 2009-ին, 2008-ի վրաց-օսական «քառօրյա» պատերազմից և դրանում ՌԴ դերակատարումից հետո:

Չտեսնել, կամ դիտարկումներից դուրս թողնել այս ամենը, ոչ միայն անթույլատրելի պարզեցում է, այլև սխալ հաշվարկների ու վճիռների կայացման գրավական:

4. Աֆրիկյան Սահելի 2019–2023 թթ. «հեղաշրջումների գոտին»

Կիրառական տեսանկյունից մեզ համար առավել նշանակություն ունի Ադրբեջանի արտաքին քաղաքականության համաժամանակեցումը ՌԴ այն գործողությունների հետ, որոնք առնչվում են Սահելի երկրներում[16] վերջին տարիներին արձանագրված հեղաշրջումների շարքին, ու դրանցում ռուսական «Վագներ»[17] մասնավոր ռազմական ընկերության (ՄՌԸ) ներգրավվածությանը: Խոսքը անցած 5 տարիների ընթացքում աֆրիկյան 7 երկրներում (որոնցից 6-ը՝ Սահելում) 10 հեղաշրջումների շարքի մասին է (տե՛ս **Քարտեզ 2**):

Պատմականորեն բոլոր այդ երկրները Ֆրանսիայի գաղութային համակարգի մաս էին կազմում, և, գտնվելով ֆրանսիական քաղաքական, տնտեսական, քաղաքակրթական ու լեզվական երկարատև ազդեցության տակ, հանդիսանում էին «ֆրանկոսֆերայի» էական

[14] Միանգամայն համահունչ «Ֆարլեյի օրենքի» աշխարհաքաղաքական ասպեկտի մեր ձևակերպմանը, [2]:

[15] Տես տակտիկական միջուկային զենքին և մեր տարածաշրջանին նվիրված մեր հոդվածաշարը ԱՌՎԱԿ կայքէջում:

[16] Արաբերեն՝ «*սահել*» բառից՝ «ափ», «սահման»: Սահարայի անապատից հյուսիս ընկած Աֆրիկյան երկրների գոտի:

[17] Ստեղծվել է հավանաբար 2013-ին *(Moran Security Group)*, ակտիվ մասնակցություն է ունեցել Սիրիայում, Ուկրաինայում և Ղրիմում 2014-ից ծավալվող ռազմական ու քաղաքական գործընթացներում:

բաղադրիչ: Մեր վերլուծության համար կարևոր է հասկանալ «Սահելյան» հեղաշրջումների այս շղթայի ժամանակագրությունը:

Այն սկսվում է 2019-ի ապրիլի 11-ով, երբ Սուդանում բանակի կողմից իշխանությունից հեռացվեց նախագահ Օ. Ալ-Բաշիրը, իսկ օգոստոսին անցումային կառավարության ղեկավար կարգվեց Ա. Համդոկը: Սուդանում երկրորդ հեղաշրջումը տեղի ունեցավ 2021 թ. հոկտեմբերին, երբ ձերբակալվեց արդեն Ա. Համդոկը ու լուծարվեց անցումային վարչակազմը: 2023 թ. ապրիլից Սուդանում սկսվեց նախկին խռովարարների միջև պատերազմը (արդյունքը՝ հազարավոր զոհեր, 3.6 մլն տեղահանվածներ): Հաջորդ հեղաշրջումը տեղի ունեցավ 2020 թ. օգոստոսի 18-ին՝ Մալիում, և կրկին անգամ այդտեղ՝ 2021 թ. մայիսի 24-ին: Հաջորդը՝ 2021 թ. ապրիլի 20-ին՝ Չադում, հաջորդը՝ 2021 թ. սեպտեմբերի 5-ին՝ Գվինեայում: Հաջորդ երկուսը՝ Բուրկինա Ֆասոյում, 2022 թ. հունվարի 24-ին և սեպտեմբերի 30-ին: Վերջապես, 2023 թ. հուլիսի 26-27-ին՝ Նիգերում և օգոստոսի 30-ին՝ Գաբոնում, (տե՛ս **Քարտեզ 2**):



Քարտեզ 2. 2019–2023 թթ. Աֆրիկյան Սահելի «հեղաշրջումների գոտին»:
Աղբյուրը՝ *Le Monde*, 09.09.2023.

Այս 10 հեղաշրջումներից գրեթե բոլորում հստակ նշմարելի է ՌԴ, մասնավորապես՝ «Վագներ» ՄՌԸ անմիջական կամ անուղղակի դերակատարումը, իսկ որոշներում՝ նաև Ադրբեջանի ներկայությունը: Սա կարևոր հանգամանք է, ու դրան դեռ կանդրադառնանք ստորև: Բայց մինչ այդ շեշտենք երկու փաստ:

Նախ, ֆրանսիական «*Լե Մոնդ*» ամսագրի այս ինֆորմատիվ ու շատ օգտակար գրաֆիկայում նշված է Գաբոնը[18], որը երկրների այս շարքում միակ ոչ-Սահելյան երկիրն է (**Քարտեզ 2**): Սակայն, չգիտես ինչու, այստեղ հիշատակված չէ Կենտրոնական Աֆրիկյան Հանրապետությունը (ԿԱՀ, ՆԱՐ, քարտեզում՝ REP. CENTRAFRICAINE), մինչդեռ այստեղ 2018-ին ծավալված դեպքերը, կարծում ենք, անմիջական կապ ունեն թե՛ 2019–2023 թթ. Սահելյան հեղաշրջումների հիշյալ շղթայի, թե՛ դրանցում «Վագներ» ՄՌԸ դերակատարման հետ:

Հիշեցնենք, որ 2018 թ. հուլիսի 30-ին ԿԱՀ-ում սպանվեց ռուսաստանցի Օ. Ջամալը ու երկու այլ լրագրողներ, որոնք ԿԱՀ էին ժամանել այս երկրում «Վագների» գործունեության, մասնավորապես Ե. Պրիգոժինի կողմից ոսկու հանքերի շահագործման մասին ֆիլմ նկարելու նպատակով: Մամուլում նշվում էր, որ այս ֆիլմի ֆինանսավորումը ապահովում էր ռուսաստանյան նախկին օլիգարխ, «Юкос» նավթային ընկերության սեփականատեր, իսկ այսօր՝ վտարանդի Մ. Խոդորկովսկին:

Հիշեցնենք նաև, որ Օ. Ջամալը՝ Հայդար Ջամալի որդին է: Իսկ այն հարցերը, թե ինչ շոշափելի ազդեցություն են ունեցել հայր և որդի Ջամալները Մոսկվայում և ՌԴ-ում հակահայկական և հակահայաստանյան տրամադրությունների տարածման ու արմատավորման գործում, ի՞նչ կապ են ունեցել ադրբեջանական «*հակաիմպերիալիստական և հակա-գաղութատիրական*» շրջանակների, ու, առհասարակ՝ ռուսաստանյան «ձախական» շարժումների հետ, դեռ կարոտ են համակողմանի ուսումնասիրության:

Երկրորդը. կարծում ենք, որ Սահելյան հեղաշրջումների շղթան անհրաժեշտ է դիտարկել հարցին առնչվող ավելի լայն երևույթների համատեքստում: Այս առումով չափազանց կարևոր է շեշտել հետևյալը. *2023 թ. հուլիսի 27-28-ին Ս. Պետերբուրգում «ՌԴ–Աֆրիկա» գագաթնաժողովի[19] անցկացումը, 2023 թ. հուլիսի 27-ին Նիգերի հեղաշրջումը, 2023 թ. հուլիսին Բաքվում ԲՍԳ ստեղծումը (տես վերը) անհրաժեշտ է դիտարկել ոչ թե որպես ժամանակային պարզ զուգադիպություն, այլ որպես մտադրությունների և գործողությունների համաժամանակեցում (սինխրոնացում): Այս տեսանկյունից հատկապես ուշագրավ է, որ «Սահելյան հեղաշրջումների շղթան» սկսվում է հենց 2019-ից, երբ Ադրբեջանը դարձավ ՀԵՇ-ը նախագահող երկիր:*

Այս հանգամանքն ընդգծելու համար հավելենք հետևյալը:

---

[18] Այսօր ուսանելի է վերադիտել Գաբոնի (և Մոզամբիկի՝ «ֆրանկոֆերայի» ևս մեկ երկրի) ներկայացուցիչների ընդհանուր առմամբ՝ պրոհայկական ելույթները ՄԱԿ-ի ԱԽ 2023 թ. նիստին, տես՝ https://hy.armradio.am/archives/353988 (բեռնման օրը՝ 06.06.2024):

[19] Второй Саммит «Экономический и Гуманитарный Форум Россия – Африка». Ըստ որոշ հրապարակումների, գագաթնաժողովի կուլուարներում նկատվել էր «Վագների» ղեկավար Ե. Պրիգոժինը: Հիշեցնենք, որ 2023 թ. հունիսի 23-24-ին Ե. Պրիգոժինի գլխավորությամբ ՌԴ-ում տեղի ունեցավ զինված ապստամբության փորձ (արշավ՝ Ռոստովից դեպի Մոսկվա): Երկու ամիս անց, 2023 թ. օգոստոսի 23-ին, դեպի Վալդայ (ՌԴ) թռիչքի ժամանակ առեղծվածային «ավիավթարում» զոհվեցին Ե. Պրիգոժինը, Դ. Ուտկինը («Վագներ»), Ե. Մակարյանը («Մակար») և այլք: Պրիգոժինի մահից հետո «Վագները» լուծարվել է, անձնակազմը՝ մասամբ անցել ՌԴ ՊՆ ենթակայության ներքո:

2024 թ. ապրիլի 4-ին Կոնգոյի Հանրապետության (Բրազավիլ, ԿՀ) նախագահ Սասսու-Նգեսսոի հետ հանդիպմանը Ադրբեջանի նախագահ Ի. Ալիևը ընդգծել էր[20], որ «*որոշ ժամանակ առաջ Ադրբեջանում ստեղծվել է ԲՄԳ նախաձեռնությունը, որի հիմնական նպատակն է պայքարել գաղութատիրության նոր դրսևորումների դեմ և աջակցություն ցուցաբերել գաղութատիրությունից տառապող ժողովուրդներին՝ օրինական հիմունքներով ապահովելով նրանց ազատությունը*»:

Այս հանդիպումից մի քանի շաբաթ անց, 2024 թ. մայիսի 19-ին, կիրակի առավոտյան, Կոնգոյի Դեմոկրատական Հանրապետությունում (Կինշասա, ԿԴՀ, Քարտեզ 2-ում՝ *République démocratique du Congo*)[21] տեղի ունեցավ հեղաշրջման փորձ, որն արագորեն ճնշվեց զինվորականների կողմից[22]: Իրադարձությունները տեղի էին ունեցել Կոնգո գետի աջ ափին, ԿԴՀ մայրաքաղաք Կինշասայում[23], նախագահ Ֆ. Տշիսեկեդիի նստավայրի մոտ: Պաշտոնական հաղորդագրությունների համաձայն՝ «*հեղաշրջման փորձին մասնակցել են մի շարք օտարերկրացիներ և կոնգոլեզցիներ*»: Ավելի ուշ ԿԴՀ-ում ԱՄՆ-ի դեսպան Լ. Թեմլինը իր բլոգում գրել էր, որ «*մտահոգված է հեղաշրջման փորձում ԱՄՆ-ի քաղաքացիների մասնակցության լուրերով*», իսկ սոցցանցերում տարածված հոլովակներում նկատելի էր, թե ինչպես են ռազմական հագուստով մարդիկ Կինշասայի Նախագահական պալատի մոտ ծածանում նախկին Զաիրի դրոշը[24]:

Կիրակի երեկոյան ու հաջորդ օրերին հրապարակումներ հայտնվեցին այն մասին, որ Կինշասայում հեղաշրջման փորձը կազմակերպվել է Կոնգոյի (Բրազավիլի) կողմից: Ինչն, իհարկե, հերքվեց պաշտոնական ԿՀ կողմից, նշելով, որ ԿՀ Նախագահ Նգեսսոն այդ ժամանակ գտնվում էր Նյու-Յորքում և մասնակցում ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի 78-րդ նստաշրջանի աշխատանքներին»[25]:

Ծածանվե՞լ էր, արդյոք, նաև Ադրբեջանի դրոշը 2024 թ. մայիսի 19-ին Կինշասայում, հայտնի չէ: Սակայն մեզ հայտնի է, որ ռազմական գործողությունների ու

---

[20] https://azertag.az/ru/xeber/prezident_ilham_aliev_sredi_napravlenii_nashei_vneshnei_politiki_borba_sneokolo__nializmom_imeet_osoboe_znachenie-2962465 (բեռնման օրը՝ 04.06.2024) Այն հանգամանքը, որ Կոնգոյի (Բրազավիլ) նախագահ Ս. Նգեսսոյի որդին պետական նավթային ընկերության ղեկավարն է, անշուշտ, առանձնակի ջերմություն էին հաղորդել այս հանդիպմանը:

[21] Նախկին ֆրանսիական գաղութ, մինչ 1997 թ.՝ Զաիր:

[22] https://www.reuters.com/world/africa/democratic-republic-congo-army-says-it-stopped-attempted-coup-2024-05-19/ (բեռնման օրը՝ 01.07.2024):

[23] ԿՀ և ԿԴՀ մայրաքաղաքներ՝ Բրազավիլը և Կինշասան գտնվում են Կոնգո գետի հանդիպակաց ափերին:

[24] https://www.interfax.ru/world/961251 (բեռնման օրը՝ 12.06.2024)

[25] https://www.africanews.com/2023/09/18/congo-denies-claims-of-coup-attempt/ (բեռնման օրը՝ 12.06.2024): Կոնգոներին վերաբերող այս իրադարձությունները մեզանում կարծես թե մնացին աննկատ: Մամուլում և լրահոսում դրանք ստվերվեցին Նախիջևանի սահմանի մոտ ուղղաթիռի առեղծվածային վթարի հետևանքով Իրանի նախագահ Է. Ռաիսիի, արտգործնախարար Հ. Աբդոլլահիանի և այլ պաշտոնյաների ողբերգական մահվան մասին լուրով: Նրանք վերադառնում էին նախագահ Ի. Ալիևի հետ հանդիպումից հետո՝ գետի վրա Խուդաֆերինի հիդրոէլեկտրակայանի և Գիզ-Կալասի հիդրոէլեկտրակայանի գործարկման պաշտոնական արարողությանը:

արկածախնդրությունների նախօրեին, ներգրավված երկրների նախագահների՝ Նյու Յորքում գտնվելը, ՄԱԿ-ի որևէ միջոցառմանը մասնակցելու նպատակով, ոչ միայն արգելք չէ, այլև կարելի ասել՝ նորմ դրանց իրականացման համար: Վկան՝ 2016 և 2020 թթ. պատերազմները մեզ մոտ, և բազում այլ դրվագներ՝ ողջ աշխարհում:

5. Սահելից՝ Խաղաղ Օվկիանոս, Կորսիկա և Կարիբյան Ծով

Հաշվի առնելով վերը շարադրվածը՝ կարծում ենք առկա են հիմքերը ենթադրելու, որ 2024 թ. մայիսին, արդեն Խաղաղ Օվկիանոսում գտնվող Նոր Կալեդոնիայում տեղի ունեցած անկարգությունները անհրաժեշտը է դիտարկել որպես Աֆրիկյան Սահելում, իրենց բնույթով՝ հակա-ֆրանսիական հեղաշրջումների շղթայի ընդլայնում դեպի Խաղաղ օվկիանոս: Ադրբեջանի արտաքին քաղաքականության այս հատկանշական ընդլայնման մասին արդեն խոսեցինք վերը: Բայց, որպեսզի տպավորություն չստեղծվի, որ խոսքը միայն Նոր Կալեդոնիայի մասին է, բերենք «Ադրբեջան–ՉԵՇ–գլոբալ Հարավ» համագործակցությանը առնչվող վերջերս արձանագրված ևս երեք ուշագրավ դրվագ:

Առաջինը վերաբերում է Միջերկրական ծովին և Կորսիկա կղզուն[26]: 2023 թ. հոկտեմբերի 24-ին Ադրբեջանի Միլի Մեջլիսում ստեղծվել էր 4 պատգամավորներից[27] բաղկացած պառլամենտական հատուկ խումբ՝ ի պաշտպանություն *«Կորսիկայի ժողովրդի՝ ազգային ինքնության վերականգնման, հիմնարար իրավունքների ու ազատությունների ապահովման պայքարին»*: Ըստ Միլի Մեջլիսի մամուլի ծառայության. *«Այս խմբի նպատակն է աջակցել համաշխարհային հանրության ուշադրությանը Կորսիկայի ժողովրդի արդարացի պահանջներին և համախմբել միջազգային ջանքերը՝ ֆրանսիական գաղութային համակարգի կործանարար հետևանքների դեմ պայքարելու համար»*[28]:

Նկատենք, որ սա տեղի է ունեցել Ֆրանսիայի Սենատի թիվ 50 հայտնի բանաձևի ընդունումից մոտ 100 օր առաջ: Հիշեցնենք, որ 2024 թ. հունվարի 17-ին Ֆրանսիայի խորհրդարանի վերին պալատը՝ Սենատը, Հայաստանի տարածքային ամբողջականությանն աջակցելու վերաբերյալ բանաձև[29] էր ընդունել, ինչպես նաև կոչ արել պատժամիջոցներ սահմանել Ադրբեջանի դեմ՝ Արցախում նախորդ տարվա սեպտեմբերին Բաքվի սանձարձակ հարձակման համար[30]: Հաջորդ օրը, 2024 թ. հունվարի 18-ին, Ադրբեջանի Միլի Մեջլիսի

---

[26] Կորսիկան, Նապոլեոնի հայրենիքը, հանդիսանում է Ֆրանսիայի 18 տարածաշրջաններից (Régions) մեկը, այն 5 տարածաշրջանների շարքում, որոնք գտնվում են Ֆրանսիայի մայրցամաքային տարածքից դուրս (Մարտինիկա, Գվադելուպա՝ Կարիբյան ավազանում, Ֆրանսիական Գվիանա՝ Լատինական Ամերիկայում, Կորսիկա՝ Միջերկրականում, Մայոտ և Ռեյունիոն՝ Հնդկական օվկիանոսում): Չխառնել Ֆրանսիայի անդրծովյան տարածքների *(collectivité d'outre-mer)* հետ:

[27] Турал Гянджалиев, Джаваншир Фейзиев, Шахин Исмайлов, Азер Керимли.

[28] https://interfax.az/view/90224 (բեռնման օրը՝ 06.06.2024)

[29] https://www.senat.fr/leg/tas23-050.pdf (բեռնման օրը՝ 24.06.2024):

[30] Բանաձևը չունի իրավական պարտավորեցնող ուժ: Սա առաջին բանաձևը չէ, որը կոչ է անում Արցախյան հակամարտության ֆոնին պատժամիջոցներ կիրառել Ադրբեջանի դեմ: Վերջին նման բանաձևը ընդունվել էր 2022 թ.

միջազգային հարաբերությունների և միջխորհրդարանական հարաբերությունների հանձնաժողովը կոչ արեց կառավարությանը պատժամիջոցներ սահմանել Փարիզի դեմ՝ ի պատասխան Ֆրանսիայի Սենատի հիշյալ որոշման:

Առաջարկվել էր նաև դադարեցնել բոլոր տնտեսական հարաբերությունները Ֆրանսիայի հետ և ճանաչել «Կանակայի» (Նոր Կալեդոնիա), «Մաոհի-Նուիի» (Ֆրանսիական Պոլինեզիա) և Կորսիկայի անկախությունը: Կոմիտեն կոչ է արել սառեցնել ֆրանսիացի պաշտոնյաների բոլոր ակտիվները, երկրից վտարել ֆրանսիական բոլոր ընկերությունները, ներառյալ՝ նավթագազային *Total Energies* ընկերությունը, արգելել ֆրանսիական ընկերություններին մասնակցել պետական նախագծերին[31]:

Հաջորդը վերաբերում է Կարիբյան ավազանին: Ըստ թուրքական և ադրբեջանական 2024 թ. հունիսի 20-ի մի շարք հրապարակումների, Գվադելուպայի[32] Ազգային Միության միջազգային համագործակցության գծով հատուկ ներկայացուցիչ Պ. Տասիտը հայտարարել էր. «*Ֆրանսիան իր ներկայիս հզորությանը հասել է մեր հողերի շնորհիվ: Եթե մի կողմ դնենք անդրծովյան տարածքները, ինքը՝ Ֆրանսիան, փոքր երկիր է: Իսկ մենք հարուստ ռեսուրսներ ունենք, և այդ պատճառով Ֆրանսիան չի ցանկանում մեզ ազատ թողնել: Մենք խնդրում ենք Ադրբեջանին օգնել մեզ: Ողջ աշխարհն է ճանաչում Ադրբեջանը և մենք ցանկանում ենք, որ ամբողջ աշխարհը ձեր միջոցով իմանա մեր մասին*»[33]:

Ուշագրավ է, որ ըստ Ադրբեջանի կաթոլիկ եկեղեցու կայքի, 2022 թ. դեկտեմբերի 10-ին Բաքվի Սուրբ Մարիամ Աստվածածնի Անարատ Հղության եկեղեցում[34] մատուցվեց Սուրբ պատարագ՝ նվիրված Գվադալուպեի Տիրամոր[35] տոնակատարությանը: Պատարագին մասնակցել էին Լատինական Ամերիկայի և Կարիբյան ավազանի երկրների դեսպանությունների ղեկավարներն ու Լատինական Ամերիկայի երկրների ադրբեջանաբնակ կաթոլիկները[36]: Հիշեցնենք, որ Գվադելուպայի ներկայացուցիչները սկսած 2023-ից մասնակցում են վերը հիշատակված БИГ կողմից կազմակերպված միջոցառումներին, մասնավորապես՝ 2023 թ. հոկտեմբերի 20-ին Բաքվում կայացած «Նեոգաղութատիրություն. Մարդու իրավունքների խախտում և անարդարություն» կոնֆերանսին (տես վերը):

նոյեմբերին: Մինչ օրս, ո՛չ Փարիզը ո՛չ էլ այլ մայրաքաղաք, Բաքվի նկատմամբ պատժամիջոցներ չի սահմանել:

[31] https://www.kommersant.ru/doc/6455633 (բեռնման օրը՝ 24.06.2024):

[32] 1628 քառ. կմ մակերեսով կղզի-պետություն Կարիբյան ծովի արևելյան հատվածում: 1946-ից հանդիսանում է Ֆրանսիայի անդրծովյան դեպարտամենտ (département d'outre-mer): Բնակչությունը մոտ 400 հազ մարդ, որի 95%-ը՝ կաթոլիկ:

[33] https://report.az/ru/vneshnyaya-politika/predstavitel-gvadelupy-franciya-pytaetsya-izolirovat-nas-my-prosim-pomoshi-u-azerbajdzhana/ (բեռնման օրը՝ 24.06.2024):

[34] Կառուցումն ավարտվել է 2006-ին: Օծվել է 2012-ին՝ ի պատիվ Հովհաննես Պողոս II պապի Ադրբեջան կատարած այցի հոբելյանի (150 կաթոլիկներ ունեցող Ադրբեջան, Հռոմի պապը այցելել էր 2002-ին, նախագահ Հ. Ալիևի հրավերով), https://www.svoboda.org/a/24223339.html (բեռնման օրը՝ 01.07.2024):

[35] Our Lady of Guadalupe. Մեքսիկայի, Կենտրոնական Ամերիկայի և Կարիբյան ավազանի կաթոլիկների ամենահարգի կերպարը:

[36] https://www.catholic.az/en/archives/2507 (բեռնման օրը՝ 01.07.2024):

Անցնենք այս կոնֆերանսի ևս մի մասնակցին՝ Ֆրանսիական Պոլինեզիային: 2024 թ. հունիսի 28-ին հայտնի դարձավ[37], որ Ադրբեջան է ժամանել Ֆրանսիական Պոլինեզիայի *«Tavini Huiraatira»*[38] կուսակցության պատվիրակությունը, «Ֆրանսիական Պոլինեզիայի ապագաղութացման իրավունք. Մարտահրավերները և Հեռանկարները» խորագրով կոնֆերանսին մասնակցելու նպատակով: «Москва-Баку» ամսագրի տվյալներով, այս կոնֆերանսի անցկացման մասին պայմանավորվածությունը ձեռք էր բերվել 2024 թ. ապրիլի 30-ին՝ БИГ կողմից Վիեննայում գտնվող ՄԱԿ-ի գրասենյակում կազմակերպված «Ազատում գաղութատիրությունից. Ուծացման հետևանքները և ազդեցությունը մարդու իրավունքների իրացման վրա» խորագրով մեկ այլ կոնֆերանսի աշխատանքների ընթացքում[39]:

Գտնվելով Բաքվում, *«Tavini Huiraatira»* կուսակցության գլխավոր քարտուղար՝ Վ. Մաամաատուահիխուտապուն հայտարարել էր, որ *«Ֆրանսիական Պոլինեզիան ունի Ադրբեջանի օժանդակության կարիքը: Քաղաքականապես մենք երիտասարդ ժողովուրդ ենք, ու Ադրբեջանի օգնության կարիքն ունենք: Մենք հավատում ենք, որ դուք կօգնեք մեզ, և որ արդարությունն, ի վերջո, կհաղթի»*[40]:

Թե հատկապես ի՞նչ օգնություն էր ակնկալում Ադրբեջանից այս գլխավոր քարտուղարը, այն երկրից, որն ավելի քան մեկ դար զբաղված է հայերի, թաթերի, լեզգիների, խինալուղների, հրեաների և ավարների ուծացմամբ, դժվար է պատկերացնել: Մի բան, սակայն, պարզ է, հավանաբար, շուտով մենք կլսենք նաև Ֆրանսիական Պոլինեզիայում խժդժությունների մեկնարկի մասին:

Ինչ վերաբերում է Բաքվի 2023 թ. հոկտեմբերի 20-ի կոնֆերանսի մեկ այլ մասնակցին՝ Ֆրանսիական Գվիանային, ապա հաշվի առնելով այն հանգամանքը, որ այստեղ է գտնվում Ֆրանսիայի «Կուռու» տիեզերարձակ կայանը, նկատի ունենալով դրա կարևորությունը ֆրանսիական բարձր տեխնոլոգիական ու ռազմավարական նշանակության ծրագրերի իրագործման համար, հիշելով Ադրբեջան-Սուրինամ ուշագրավ համագործակցությունը, Բոլիվիայում և Վենեսուելայում ՌԴ էական ներկայությունը, կարելի է ենթադրել, որ մենք դեռ կհանդիպենք այս երկրների անունները օրվա *«Breaking news»* քաղաքական լրահոսում:

Ի մի բերենք մինչ այժմ ասվածը:

1. Սահելի գոտում ու այլ երկրներում հեղաշրջումների դինամիկան ու դրանց մանրամասները հստակ վկայում են ԱՄՆ-ի (և «անգլոսֆերայի») և Ֆրանսիայի (ու

---

[37] https://oxu.az/ru/politika/polinezijskaya-partiya-vyrazila-blagodarnost-azerbajdzhanu-za-podderzhku (բեռնման օրը՝ 01.07.2024)

[38] Թարգմանաբար այն նշանակում է «Ժողովրդի Ծառա», ինչն ակամայից հիշեցնում է ուկրաինական հայտնի երգիծական «Слуга народа» սերիալը:

[39] https://moscow-baku.ru/news/politics/v_azerbaydzhan_pribyla_delegatsiya_frantsuzskoy_polinezii_dlya_ustanovleniya_sotrudnichestva/ (բեռնման օրը՝ 01.07.2024):

[40] https://report.az/ru/vneshnyaya-politika/gensek-partii-tavini-huiraatira-francuzskaya-polineziya-nuzhdaetsya-v-podderzhke-azerbajdzhana/ (բեռնման օրը՝ 01.07.2024):

«ֆրանկոսֆերայի») միջև գլոբալ բախման մասին: Հիշենք միայն AUKUS դաշինքի հետագա ամրապնդման, Ավստրալիային գրոհային միջուկային սուզանավերի փրամադրման ու այս գործարքից Ֆրանսիայի արտաքսման արտառոց, գլոբալ նշանակության դրվագը:

2. Որքան էլ դա տարօրինակ թվա, ստիպված ենք ենթադրել, որ Աֆրիկյան հեղաշրջումների այս շղթայում ՌԴ-ն, մասնակի՝ նաև Չինաստանը, «խաղում են» ԱՄՆ-ի և «անգլոսֆերայի» օգտին՝ ընդդեմ Ֆրանսիայի ու «ֆրանկոսֆերայի»: Գիտակցված, թե՛ իրավիճակային հաշվարկներից դրդված՝ դա առանձին, ծավալուն և նուրբ հարց է:

3. Ելնելով նրանից, որ ԿՀ-ն ու ԿԴՀ-ն դուրս են գտնվում Սահելի գոտուց, ինչպես և Գաբոնը (տես վերը), կարելի է ենթադրել որ ՌԴ ու Ադրբեջանի միջև առկա է որոշակի «դերաբաժանում». բուն Սահելի գոտին, ինչպես նաև Կորեական թերակղզին ու Հարավարևելյան Ասիան, հավանաբար, հանդիսանում են ՌԴ ազդեցության տիրույթ, իսկ Ադրբեջանը կենտրոնանում է աֆրիկյան անդր-Սահելյան երկրների և մոլորակի այլ հատվածներում գտնվող «ֆրանկոսֆերայի» երկրների վրա:

4. Անթույլատրելի պարզեցում կլինի պայմանավորել այս հեղաշրջումներին ՌԴ ներգրավվածությունը, ոմանցում՝ Ադրբեջանի առկայությունը, բացառապես Ուկրաինայում ՌԴ կողմից վարվող ՀՌԳ-ով ու դրա հանդեպ Ֆրանսիայի դիրքորոշումով, կամ Հայաստան-Ֆրանսիա համագործակցության դինամիկայով: Ավելի համարժեք է դիտարկել դա գլոբալ «Հարավ» և «Հյուսիս» դիմակայության համատեքստում [1], սեփական ազդեցության մակրո-ռեգիոնների ստեղծման ուղղությամբ ՌԴ և Չինաստանի ջանքերի հետ, որոնց փրամաբանության մեջ Ադրբեջանը փորձում է տեղավորել սեփական աշխարհաքաղաքականությունը:

Բոլոր դեպքերում օգտակար է հիշել, որ Սահելի գոտում ու աֆրիկյան մի շարք այլ երկրներում հեղաշրջումները սկսվեցին շատ ավելի վաղ, քան Ուկրաինայում սկսվեց ՀՌԳ-ն: Իսկ ադրբեջանական Միլի Մեջլիսում Կորսիկային նվիրված պառլամենտական խումբը ստեղծվեց Ֆրանսիական Սենատում թիվ 50 բանաձևի ընդունումից 100 օր առաջ:

6. «Էշ նստելը մի աիբ է, իջնելը՝ երկու»

Եզրափակենք հոդվածը դիտարկումներով, որոնք առնչվում են «Հյուսիս» և «Հարավ» դիմակայության գաղափարախոսական հենքին՝ նեոգաղութատիրության դեմ պայքարում «ձախական» քաղաքական խոսույթին, ինչպես նաև «հայրեր և որդիներ» դասական կոնֆլիկտին, սերնդային ալիքների դինամիկային ու պատմական քաղաքականությանը [6]:

Հասկանալի է, որ Ադրբեջանի մուտքը գլոբալ «Հյուսիսի» և «Հարավի» դիմակայություն, ինչպես նաև վերջին տարիներին լայնածավալ օրակարգով արտաքին քաղաքականության վարումը, էական մարտահրավերներ են՝ Հայաստանի ու դրա արտաքին քաղաքականության համար: Հասկանալի է նաև, որ այստեղ ծագող խնդիրների պարզ ձևակերպումն անգամ առանձնակի ջանք է պահանջում, սթափ և համակողմանի վերլուծություն: Կարծում ենք, որ այս

ամենը դեռ առջևում է, և պետք է դառնա հայկական վերլուծական հանրության կարևոր խնդիր: Սակայն արդեն այստեղ անհրաժեշտ է նշել հարցի մի քանի, ոչ այնքան ակնհայտ, կողմեր:

Բանն այն է, որ նեոգաղութատիրության դեմ պայքարում «Հյուսիս» և «Հարավ» գլոբալ դիմակայությունը գլխավորելու ՌԴ և Ադրբեջանի գործողությունների համաժամանակեցումը, ինչ խոսք, ունի կիրառական նպատակ. առաջ մղել սեփական աշխարհաքաղաքական օրակարգը: Ընդ որում, ունենալով որոշակի նմանություն, ՌԴ և Ադրբեջանի համար դրանք էականորեն տարբերվում են միմյանցից:

Բայց, նման համաժամանակեցումը պարտավորեցնող է այն առումով, որ ենթադրում է նաև գաղափարախոսական համաժամանակեցում, այսինքն՝ «ձախական» ուժերի, նեոմարքսիստական, նեոտրոցկիստական և մաոիստական խմբավորումների հետ համագործակցություն: Ու եթե ԽՍՀՄ ժառանգորդ՝ ՌԴ-ն դրա հարուստ փորձն ունի՝ «Կոմինտերնից» մինչև ԽՄԿԿ Քաղբյուրոյի արտասահմանյան բաժին, ու ՊԱԿ-ի (КГБ) և ՀԳՎ (ГРУ) համապատասխան ստորաբաժանումներ, ապա Ադրբեջանն այս փորձը կուտակում է այսօր՝ նախագահական ապարատում[41] և ԲԻԳ նախաձեռնության շրջանակներում:

Ընդհանրապես, նեոգաղութատիրության դեմ պայքարն ու «ձախական» խոսույթն իրենց բնույթով երկսայր սուր են: Դրանք հաջողությամբ օգտագործվում են հակադիր աշխարհաքաղաքական բևեռների կողմից: Վերջին օրինակները կարել է գտնել, մի կողմից՝ Եվրախորհուրդի պառլամենտական ասամբլեայի 2024 թ. ապրիլի 17-ին ընդունված բանաձևում, որն Նավալնու մահվան կապակցությամբ կոչ է անում «ապագաղութացնել ՌԴ փոքր ազգությունները»[42]: Մյուս կողմից, այն հստակորեն ընդգծված է 2023 թ. հուլիսյան «ՌԴ–Աֆրիկա» գագաթնաժողովի, և ադրբեջանական ԲԻԳ նախաձեռնության հիմնարար փաստաթղթերում (տես վերը):

ՌԴ ու Ադրբեջանի կողմից ապագաղութացման խոսույթի նման համաժամանակեցված օգտագործումը, կճոճի ադրբեջանական հասարակությանը դեպի «ձախական» դաշտ: Առավել ևս 2023-ից հետո, երբ կարծես թե լուծվել է «Ալիևների կլան – ադրբեջանական ժողովուրդ» հասարակական դաշինքի հիմնական խնդիրը՝ Ղարաբաղը հայաթափված է ու գտնվում է Ադրբեջանի կազմում:

Իսկ սա նշանակում է, որ ադրբեջանական հասարակությունում կակտիվանա «ձախական» խոսույթը՝ արդար ու հավասար պայմաններ բոլորի համար, կոռուպցիայի բացառում, մարդու իրավունքների պահպանում և այլն: Ինչը, կամա թե ակամա, կմերձեցնի Ադրբեջանը ռուսաստանյան «ձախական» շրջանակներին ու «ԽՍՀՄ 2.0» ծրագրի ջատագովներին: Այս առումով բնութագրական է երկու կարևոր գաղափարախոսական (և, հասկանալի է՝

[41] Այստեղ անշուշտ կարևոր է Ալիև-ավագի հարուստ ժառանգությունը ԽՍՀՄ ՊԱԿ և մոլորակի «ձախական», հեղափոխական ուժերի հետ համագործակցության առումով:

[42] Парламентская ассамблея СЕ приняла резолюцию, признающую Россию де-факто диктатурой и призывающую к деколонизации малых наций РФ. (բեռնման օրը՝ 01.07.2024):

քարոզչական) հոդվածների գրեթե միաժամանակյա հրապարակումը. նկատի ունենք ՌԴ նախկին նախագահ Դ. Մեդվեդևի «Время метрополий истекло» հոդվածը [7], և haqqin.az կայքի «Алиев и трансформация» խմբագրականը [8]:

Իրականում իրադրությունն այստեղ ավելի բարդ է, պայմանավորված նրանով, որ «ԽՍՀՄ 2.0» ծրագիրը, կամ «ռուսական նոր կայսերականությունը», առավել ևս՝ «Սլավոնական սուրբ դաշինքը», որոշակի հակասության մեջ են գտնվում բուն ռուսական «եվրասիականության»[43] հետ, և սուր հակասության՝ «Թյուրքական աշխարհ» ծրագրի հետ: Այս առումով ադրբեջանական «ձախական» ուժերը (հանգուցյալ Ջամալներից մինչև կենդանի Մ. Շևչենկո, Ա. Յունուս և այլն) դեռ պետք է կողմնորոշվեն: Ակամայից կողմնորոշելով նաև մեր քաղաքական ու աշխարհաքաղաքական խոսույթը:

Վերջապես, նեոգաղութատիրության դեմ պայքարը ուրույն կերպով կապված է հակակոռուպցիոն պայքարին, դրա գաղափարախոսական ու ժողովրդագրական ասպեկտներին, մասնավորապես՝ «հայրեր և որդիներ» սերնդային կոնֆլիկտին [6]: Նկատի ունենք այն, որ նեոգաղութատիրության դեմ պայքարը, լինելով ընդհանուր առմամբ «ձախական», հիմնվում է սոցիալական արդարության ապահովման գերակայության վրա: Բայց նույն հիմքի վրա է նաև կանգնած կոռուպցիայի դեմ պայքարը՝ միևնույն ժամանակ լինելով նաև ներքին քաղաքականության վերին աստիճան արդյունավետ գործիք:

Ի վերջո, անցած տասնամյակում Ա. Նավալնու ՓԲԿ-ն[44] Ռուսաստանի միակ կազմակերպված ընդդիմադիր ուժն էր և այն մնում է այդպիսին անգամ այսօր, Ա. Նավալնու մահից հետո: Դրա վկայությունը թերևս կարելի է տեսնել այն մեծ հասարակական և քաղաքական արձագանքում, որին արժանացավ Մ. Պևչիխի[45] *«Դավաճանների ժամանակը»* փաստագրական սերիալը: Այդ սերիալի գաղափարախոսական և քարոզչական էությունը սերնդային կոնֆլիկտի տեսանկյունից լավագույնս ձևակերպեց Ս. Բելկովսկին[46]: Նա ներմուծեց *«ԲՄՊ սերունդ»* հասկացությունը[47], որին և ուղղված էր հիշյալ սերիալի հիմնական քաղաքական ու քարոզչական պատգամը: Այստեղ *ԲՄՊ* հապավումը[48] նշանակում է «без меня поделили», այսինքն՝ «առանձ ինձ բաժանեցին» (ԱԻԲ), ինչը և խորհրդանշում է այսօրվա ռուսաստանյան «որդիների» սերնդի ընդվզումը՝ «հայրերի» սերնդի հանդեպ, որոնք թաղվելով համատարած կոռուպցիայի մեջ, «*դավաճանեցին Հայրենիքին և բերեցին այն կործանման եզրին*»:

---

[43] Սիմավորյան Ա. Ս., «Թուրքական եվրասիականության» և «ռուսական եվրասիականության» գաղափարախոսությունների համեմատական վերլուծությունը, ԱՌՎԱԿ, (10.07.2023), https://shorturl.at/E7dFD (բեռնման օրը՝ 01.07.2024):

[44] 2021 թ. հունիսից ՌԴ իշխանությունների կողմից ճանաչվել է՝ որպես ահաբեկչական կազմակերպություն:

[45] 2023 թ. մայիսից ՌԴ իշխանությունների կողմից ճանաչվել է՝ որպես օտարերկրյա գործակալ:

[46] 2023 թ. սեպտեմբերից ՌԴ իշխանությունների կողմից ճանաչվել է՝ որպես օտարերկրյա գործակալ:

[47] https://youtube.com/watch?v=Ns3soBqrcl4&si=pXUBGZcKnCvMQxUn (բեռնման օրը՝ 04.07.2024):

[48] Այս հապավումը նշանակում է նաև «боевая машина пехоты» (հետևակի մարտական մեքենա), այս սահմանմանը հաղորդելով լրացուցիչ խորություն, ու դարձնելով այն իրապես սրամիտ:

Որդեգրելով նեոգաղութատիրության դեմ պայքարի խոսույթը և «ձախական» կարգախոսներով մտնելով «Հարավ» և «Հյուսիս» դիմակայության դաշտ, Ադրբեջանի ներքաղաքական կյանքը անխուսափելիորեն կճոճվի դեպի «ձախ»: Եվ աստեղ առաջին պլան կգան սոցիալական արդարության պահանջը, և պայքարը կոռուպցիայի դեմ:

«Խաղեր տալ» հասարակական այս զգացմունքների հետ՝ պարտավորեցնող ձեռնարկում է, անգամ այն պարագայում, երբ Ադրբեջանի հիմնական խնդիրը «լուծվել է» առանց երկիրը կործանման եզրին հասցնելուն: Չե որ ժամանակը կանգ չի առնում: Ադրբեջանում գալիք սերնդին պետք է ինչ-որ բան առաջարկել, ավելին՝ քան արդեն իսկ արձանագրված «հաղթանակը»: Դե իսկ Հայաստանը արդեն վերապրել է «որդիների սերնդի» իր հակակոռուպցիոն «հեղափոխությունը»:

Ինչպես ասում են՝ «էշ նստելը մի ԱԻԲ է, իջնելը՝ երկու»:

ԱՂԲՅՈՒՐՆԵՐ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Марджанян А. А., Армения на карте «Войны и Мира»: «ԱՌՎԱԿ» վերլուծական կենտրոն, (27.05.2024), https://arvak.am/ru/армения-на-карте-войны-и-мира/

2. Марджанян А. А. ОДКБ - современные вызовы. Взгляд из Армении. ЕВРАЗИЙСКАЯ ИНТЕГРАЦИЯ: экономика, право, политика. 2019, (1): 61-66. https://www.eijournal.ru/jour/article/view/210 Տես *նաև* Марджанян А. А. Для ОДКБ наступил момент истины. «Голос Армении», 16 ноября 2018. https://www.golosarmenii.am/article/73216/dlya-odkb-nastupil-moment-istiny-

3. Սևծովյան Տնտեսական Համագործակցության Կազմակերպություն. Տեղեկանք: «ՕՐԲԵԼԻ» կենտրոն: 2019 թ., փետրվար:

4. Бакинская инициативная группа против последней неоколониальной империи. (21.10.2023), https://kavkazplus.com/news.php?id=41509.

5. В Милли Меджлисе состоялась научная конференция на тему «Новая Каледония: история, современные вызовы и ожидаемое будущее», (18.04.2024), https://azertag.az/ru/xeber/v_milli_medzhlise_sostoyalas_nauchnaya_konferenciya_na_temu_novaya_kaledoniya_istoriya_sovremennye_vyzovy_i_ozhidaemoe_budushchee__obnovleno-2971991

6. Մարջանյան Ա. Հ., Գլոբալ տարածաշրջաններ, սերնդային ալիքներ եվ պատմական քաղաքականություն: «21-րդ ԴԱՐ», թիվ 3 (79), 2018 թ., https://artsakhlib.am/wp-content/uploads/2019/06/Արա-Մարջանյան-Գլոբալ-տարածաշրջաններ-սերնդային-ալիքներ-և-պատմական-քաղաքականություն.pdf

7. Медведев, Д. А., Время метрополий истекло. (14.06.2024). https://rg.ru/2024/06/14/vremia-metropolij-isteklo.html

8. Алиев и трансформация. (27.06.2024), https://haqqin.az/news/320470